

**ՇԱՀՎԵԼՈՒ ՈՐԴԻ ՍԱՐՀԱԴԻ ՀԱՇՎԵՄԱՏՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ**

Շ. Լ. ԽԱՋԻԿՅԱՆ

Իրանի և Ռուսաստանի տնտեսական կապերը, որոնք մեծապես ընդարձակվեցին XVII դարի երկրորդ կեսին այդ երկու երկրների տնտեսական կյանքի զարգացման հետևանքով, հիմնականում իրականացվում էին Կասպ-վուզյան ձանապարհով, որը սկսվում էր Աստրախանից և ավարտվում Արխանգելսկում¹։ Այս գործում կարևոր դեր էին կատարում մեծահարուստ հայ խոջաները, որոնք հայտնի էին իրենց լայն տնտեսական կապերով և հանդես էին գալիս եվրոպական ու ասիական մայր ցամաքների միջև կատարվող առևտրական գործարքների թատերաբեմ դարձած գրեթե բոլոր կարևոր հանգուցակետերում։

Հայերի առևտրական գործունեության հիմնական կենտրոնը Ռուսաստանում Աստրախանն էր, որը տնտեսական սերտ կապերի մեջ էր անդրկովկասյան երկրների, Իրանի, Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ²։ Աստրախանից հայ վաճառականները մերձվուզյան վաճառաշահ քաղաքների վրայով անցնում էին Մոսկվա, իսկ այնուհետև Արխանգելսկի նավահանգստով (XVIII դարի 20-ական թթ. սկսած նաև Պետերբուրգով) ուղևորվում էին եվրոպական երկրներ՝ մասնավորապես Հոլանդիա։

Իրանում և Անդրկովկասում տնտեսական այդ կապերն իրականացվում էին Շամախիում³, Թավրիզում, Քաշանում և Գիլանում, հայ վաճառականների ամենակտիվ մասնակցությամբ։

Իրանից և նրա տիրապետության տակ գտնվող անդրկովկասյան երկրներից Ռուսաստան և Ռուսաստանի վրայով դեպի եվրոպական երկրներ արտածվող հիմնական ապրանքը մետաքսի հումքն էր։ Արտահանվում էին նաև մետաքսյա տարբեր գործվածքներ, ուղտի բուրդ, գորգեր, թանկագին քարեր, ոսկյա վարդեր, խունկ, սուրճ, արևելյան համեմունքներ և այլ ապրանքներ։

Ռուսաստանից արևելք տարվող ապրանքների մեջ գերակշիռ տեղ էին գրավում տարբեր կենդանիների (սամույր, սպիտակ կզաքիս, բևեռաղվես, աղնվաքիս, ջրասամույր, ժանտաքիս) մորթիները և դրանցից կարված մուշտակներն ու գլխարկները, ինչպես նաև եվրոպական երկրներից Ռուսաստան

¹ В. П. Лысов, Персидский поход Петра I 1722—1723, М., 1951, гл. 2, § 1; В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ереван, 1969, էջ 86—94։

² А. Юхт, Восточная торговля России в 30—40-х гг. XVIII в. и роль в ней армянских купцов, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 8, էջ 45։

³ Շամախու հետ սերտորեն կապված էր Նիզարադ կամ Նիզովոյ նավահանգիստը, որի մոտակայքում՝ ծովափին ոռանների և իրանցի վաճառականների միջև մշտապես առևտուր էր կատարվում։ Տե՛ս В. П. Лысов, նշվ. աշխ., գլ. 2, § 4։ Ф. И. Соймонов, Описание Каспийского моря ..., СПб., 1763, էջ 37։

ներմուծվող բազմապիսի ապրանքների՝ գործվածքների (հատկապես մահուդ), ժանյական, ժամացույցների, հայելիների, ասեղ, պերճանքի իրեր և այլն⁴։

Միջազգային ապրանքափոխանակության այս մայրուղին, պատմական և սոցիալ-տնտեսական նպաստավոր կամ արգելակիչ ազդակներին ենթակա, դարերի ընթացքում մերթ աշխուժանալով, մերթ կորցնելով իր ևրբեմնի նշանակությունը, XVII դարի կեսերից բուռն թափով սկսում է զարգանալ։

Անգլիայի և Հոլանդիայի առևտրաարդյունաբերական կապիտալի ներկայացուցիչները եռանդուն քայլեր էին կատարում Ռուսաստանի վրայով Իրանի հետ ուղղակի կապ հաստատելու նպատակով։ Նրանք ձգտում էին անդրկովկասյան երկրների և Իրանի մետաքսի հումքը ձեռք բերել առանց միջնորդների և փոխադրել Եվրոպա⁵։ Ռուսական արքունիքը համառ դիմադրություն էր ցույց տալիս և արգելքներ հարուցում ևվրոպացիների առջև, հաշվի առնելով Ռուսաստանում նրանց տնտեսական ներկայությունից բխող անխուսափելի չարադետ հետևանքները։ Միանգամայն այլ էր վերաբերմունքը հայ առևտրականների նկատմամբ, որոնք Ռուսաստանի հետ տնտեսական կապեր էին հաստատել հարյուրամյակների առաջ և քաղաքական ու տնտեսական որևէ վտանգ չէին կարող ներկայացնել։

1667 թ. ռուսական արքունիքի և ջուղահայ առևտրական ընկերության միջև կնքվում է առևտրական նշանավոր այն պայմանագիրը, որի թելադրանքով հայ վաճառականները, մի շարք արտոնություններ ստանալով, պարտավորվում են այսուհետև Իրանից արտահանվող մետաքսի հումքի բեռները Եվրոպա փոխադրել միայն Ռուսաստանի վրայով, խուսափելով Թուրքիայի տարածքով անցնող վտանգավոր ճանապարհներից⁶։

1673 թ. վերանայվում են այս պայմանագրի որոշ կետեր, հարմարեցվելով ժամանակի պահանջներին, իսկ դարավերջին մեծ չափերով ընդարձակվում են հայ վաճառականների գործունեության շրջանակները Ռուսաստանում։

Հայ-ռուսական տնտեսական կապերն ավելի լայն ծավալ են ստանում Պետրոս I-ի ղազակալության տարիներին (1682—1725)։ Ռուսաստանի առաջադիմության համար քաղաքական և տնտեսական մարդերում վիթխարի փոփոխություններ կատարելու իր ծրագրերի իրականացման և ռուսական կայսրության հարավ-արևելյան սահմանների ապահովության և ընդարձակման համար պետական այդ մեծ գործիչը գիտակցում էր հայ ժողովրդի ռազմական ու տնտեսական պոտենցիալն օգտագործելու կարևորությունը։

1711 թ. մարտի 2-ին Պետրոս I-ը հրապարակեց մի նոր հրամանագիր՝ հայ վաճառականներին նախկինում տրված արտոնությունները վերահաստատելու մասին։ Այդ հրամանագրով Պետրոս I-ը մասնավորապես պահանջում էր. «Персидский торг умножить и армян, как возможно, прилас-

⁴ А. Ю х т, նշվ. աշխ., էջ 53—54։ Առաքել Սարգսյան, Հոլանդյան և հայերի ժգ-թի գարերք, Վիեննա, 1926, էջ 55—56։

⁵ Э. Ба а ш, История экономического развития Голландии в XVI—XVII вв., М., 1949, էջ 112։ С. П. А р х а н г е л ь с к и й, Англо-голландская торговля с Москвой в XVII в., «Исторический сборник», М.—Л., 1936, № 5, էջ 13—14։

⁶ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 4, Երևան, 1972, էջ 134—138։ В. Воск а н я н, Ново-торговый устав и договор с армянской торговой компанией в 1667 г., ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 6։

каты и облегчить в чем пристойно, дабы тем подать охоту для большего их приезда»⁷.

Այս քաղաքականության դրական հետևանքները շուշացան: XVIII դարի 10-ական թթ. սկսած հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներից շատերը սկսեցին ընդարձակել տնտեսական կապերը Ռուսաստանի հետ, ավելի մեծ շահերով օգտագործելով Աստրախան—Մոսկվա—Արխանգելսկ ճանապարհը՝ Իրանի և Անդրկովկասի տարբեր շրջաններում արտահանվող մետաքսի հումքը Ռուսաստանի վրայով Եվրոպա փոխադրելու համար: Ինչպես արդեն նշեցինք, մետաքսի հումքը արտահանվող ապրանքներից գլխավորն էր, սակայն հայ առևտրականները, դրան զուգընթաց, կարևոր դեր էին կատարում նաև արևելյան և արևմտյան երկրների տնտեսական կապերի ամրապնդման գործում ընդհանրապես, մետաքսի հետ միասին Ռուսաստան ու եվրոպական այլ երկրներ արտահանելով արևելյան այլ ապրանքներ, իսկ Եվրոպայից և Ռուսաստանից Անդրկովկաս ու Իրան ներմուծելով այդ երկրներում արտադրվող և արևելյան շուկաներում մեծ պահանջարկ ունեցող ապրանքներ:

Հայ-ռուսական տնտեսական կապերի և վերոհիշյալ միջազգային ճանապարհով կատարվող ապրանքափոխանակության տնտեսական նշանակության ու հարակից հանգամանքների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն ռուսական պետական մաքսատներում կազմված հարյուրավոր այն փաստաթղթերը, որոնցում նշումներ են կատարվել հայ վաճառականների կողմից Իրանից (Աստրախանի վրայով) կամ Եվրոպայից (Արխանգելսկի վրայով) Ռուսաստան ներմուծած ապրանքների տեսակների, արժեքի, չափի ու կշռի և դրանց դիմաց գանձված մաքսերի մասին:

Այդ կարգի տնտեսական փաստաթղթերի հրապարակման և ուսումնասիրության ուղղությամբ առաջժամ կատարվել են միայն նախնական քայլեր⁸:

Մոսկվայի հին փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվում (ЦГАДА) պահվող մի գրանցման մեջ, օրինակ, մանրամասն տեղեկություններ են տրված 1717 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Հոլանդիայից Արխանգելսկի վրայով Մոսկվա ժամանած մի խումբ ջուղահայ վաճառականների մասին, որոնք Իրան տանելու համար իրենց հետ բերել էին եվրոպական ապրանքներ: Ինչպես բոլոր այս կարգի գրություններում, հայերի անուն-ազգանուններն այստեղ ևս ներկայացված են ռուսականացված այնպիսի ձևերով, որ հաճախ դժվար է լինում որոշել, թե այս կամ այն անձնավորությունը իրականում ինչ անուն է ունեցել: Նրանց շարքում հիշատակված են, օրինակ, Մերկուլ Նադարև, Նիկոլայ Ամաջանով, Ստեպան Սիրգեև, Մարտին Վասիլև, Սաբաու Սավելև անունները, համապատասխան տեղեկություններ են գրանց-

⁷ «Армяно-русские отношения в XVIII в.», под редакцией Ашота Ноанисяна, т. II, ч. I, Ереван, 1964, էջ 42: Պետրոս 1-ի արևելյան քաղաքականության և Իրանի տիրապետության տակ գտնվող անդրկովկասյան երկրամասերի ազատագրման ծրագրերի մասին տես В. П. Лысов, նշվ. աշխ., Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. II, Երևան, 1959, էջ 514—517: Г. А. Галоян, Россия и народы Закавказья, М., 1976, էջ 54, 65—70 և այլն:

⁸ Մի շարք արձեքավոր փաստաթղթեր հրապարակվել են «Армяно-русские отношения в XVII веке» (Ереван, 1953) և «Армяно-русские отношения в XVIII в.» փաստաթղթերի ժողովածուների մեջ: Կան նաև ոչ մեծաքանակ այլ հրատարակություններ:

ված նրանց բերած ապրանքների ու դրանց դիմաց գանձված մաքսի չափի մասին: Դրանք կարևոր փաստաթղթեր են, արժանի պատմատնտեսագիտական ուսումնասիրության: Սակայն իրենց մեծագույն մասով այդ կարգի փաստաթղթերից հնարավոր չէ պարզել, թե Ռուսաստան ժամանած վաճառականների ներմուծած ապրանքները որտեղ են գնվել, ինչ գումարով, ինչ ճանապարհներով ու փոխադրական միջոցներով են հասցվել Ռուսաստան, ինչ մաքսեր և տուրքեր են վճարվել անցած ճանապարհին, որտեղ և ինչ գնով են վաճառվել, ինչքան են շահվել և այլն:

Պատմատնտեսագիտական հետազոտությունների կատարելու համար վերոհիշյալ բնույթի մաքսատնային փաստաթղթերը մեծ հնարավորություններ չեն ընձեռում⁹:

Միանգամայն այլ բնույթ ունեն հայ վաճառականների կազմած հաշվեմատյանները, առուծախի օրագրերը և նման կարգի այլ փաստաթղթեր, որոնց որոնման, հայտնաբերման ու գնահատման ուղղությամբ ծավալվող աշխատանքները կարող են շատ արդյունավետ լինել: Այս կարգի մատյաններից հայ-ռուսական տնտեսական կապերի ուսումնասիրության համար արժեքավոր տեղեկություններ են պարունակում հետևյալները.

1. Սարհադ Շահվելու Բանդորյանի հաշվեմատյանը (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6241).

2. Նազարեթի որդիներ Հարությունի, Մանուկի և Աղազարի (Լազարյանների նախահոր) ռուզլաման (օրագիրը) (Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. № 101, գործ 123, վավ. 1).

3. Հարություն Դավութ դի Նազարեթի ռուզլաման և իր տնտեսական գործունեության մասին նամակների ժողովածուն (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6240).

4. Եղիա Մուշեղյանի հաշվեմատյանները և նամակները, որոնցից կարևորագույնը 1717—1720 թթ. առևտրական գործունեության մասին մանրամասն տեղեկություններ պարունակող հաշվեմատյանն է (պահվում է «Архив внешней политики России» կոչվող Մոսկովյան արխիվում, «Ռուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ» ֆոնդում)¹⁰:

Հետագայում կարող են ի հայտ գալ այդպիսի բովանդակությամբ դեռևս անհայտ նոր մատյաններ ու առանձին փաստաթղթեր, ինչպես Սովետական Միության պետական արխիվներում, այնպես էլ արտասահմանյան մի շարք գրապահոցներում:

Սկսելով առկա հաշվեմատյանների վերծանությունը և ուսումնասիրությունը, կարելի է հուսալ, որ դրանք մեծ նպաստ են բերելու հայ-ռուսական տնտեսական կապերի հանգամանալից ուսումնասիրության գծով տարվող

⁹ Դրանց պատմաաղբյուրագիտական նշանակությունը բացահայտված է հետևյալ աշխատությունների մեջ. А. Ц. Мерзон, Таможенные книги XVII века, М., 1957, Ю. В. Готье, К вопросу об изучении внутренней торговли России в XVIII в., СПб., 1911; С. И. Саконич, Из истории торговли и промышленности России конца XVII века, М., 1956. Е. Н. Кушева, Торговля Москвы в 30—40-х годах XVIII в., «Исторические записки», т. 23, М., 1947.

¹⁰ Այս նյութերի համառոտ թվարկումը գտնում ենք Ա. Գ. Արրահամյանի «Եղիա Կարենցու դիվանը» նյութերի ժողովածուի (Երևան, 1968) առաջարանի մեջ (տե՛ս էջ XXVIII—XXIX):

աշխատանքներին: Ներկա հոգվածի նպատակն է ուշադրություն հրավիրել Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանի վրա, անդրադառնալով նրա այն գրանցումներին, որոնք վերաբերում են հատկապես իրանում և նրա տիրապետության տակ գտնվող անդրկովկասյան երկրամասերում արտադրվող մետաքսի հումքի Ռուսաստան արտահանելու փաստերին:

* * *

Շահվելու որդի Սարհադը 1717 թ. Մոսկվայի մաքսատանը կազմված փաստաթղթերի մեջ հիշատակված վերոհիշյալ Սարատ Սավելևն է (Сарат Савелев), որը նույն թվականի ապրիլի 10-ին Արխանգելսկից Մոսկվա էր ժամանել 15 հակ եվրոպական ապրանքներով: Նրա հաշվեմատյանը մեզ է հասել Բերի Է կտրտված վիճակում: Հետագայում (1739 թ. առաջ)¹¹ այն ընկել է էջմիածին և նրա դատարկ էջերը, ինչպես և գրված էջերի ազատ մնացած տարածությունները (հաճախ նաև տողամեջերը), օգտագործվել են կաթողիկոսական կոնդակների սեագրությունների, աստվածաբանական ու բժշկական վանագան նյութերի ընդօրինակության համար: Այս հանգամանքը դժվարացնում է բուն հաշվեմատյանի էջերի վերծանությունը, որն ըստ ինքյան էլ դյուրին չէ. քանի որ, ուրիշ վաճառականների համանման գրությունների պես, այս մատյանը ևս շարադրված է ջուղաճայ բարբառով, որը մեծ չափով տարբերվում է դրական լեզվից և՛ իր քերականությամբ, և՛ բառապաշարով (պարսկերեն բառ-տերմիններն այստեղ օգտագործված են հսկայական չափերով): Մատյանը, որ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում № 6241-ի տակ, բաղկացած է 33×22 սմ մեծությւն 79 թերթերից:

Բուն հաշվեմատյանի գրանցումները վերաբերում են 1712—1718 թթ. ընթացքում Սարհադի, մասամբ նաև նրա հոր՝ Շահվելու, և նրանց հետ տնտեսական հարաբերություններ հաստատած այլ վաճառականների ծավալած առևտրական գործունեությանը, պարունակելով արժեքավոր տվյալներ Իրանի, Ռուսաստանի և Հոլանդիայի տարբեր քաղաքներում վերոհիշյալ թվականների ընթացքում գնված ու վաճառված ապրանքների, նրանց փոխադրումների համար վճարված ճանապարհածախսի, մաքսերի և այլ տուրքերի ու հարակից հանգամանքների մասին: Այնտեղ բազմաթիվ տեղեկություններ են գրանցված այն մասին, թե ինչ ապրանքներ էին Արևելքից արտահանվում Ռուսաստան ու եվրոպական երկրներ և ինչպիսի տնտեսական գործարքներ էին կնքում միմյանց և օտարազգի առևտրականների հետ հայ առևտրականները, ինչպիսի պայմաններով միմյանց դրամ տալիս և պարտք վերցնում և, վերջապես, ինչ շահ ստանում՝ մասնակցելով միջազգային նշանակություն ունեցող ապրանքափոխանակությանը:

Սարհադը, ջուղայեցի հայ վաճառականների մեծագույն մասի նման, առևտուր էր անում ոչ թե իր սեփական դրամազլիտով, այլ իր հոր՝ Շահվելու և կրտսեր եղբոր՝ Խոջամալի հետ համատեղ, ծառայագրվելով ջուղայեցի մեծաճարուստ երեք խոջաների՝ Օհանի որդիներ Մուրագին ու Հակոբջանին և

¹¹ Մատյանի մեջ պահպանվել է այսպիսի մի հիշատակություն. «Յայս տետրիս միջի եղեալ շարադրեցեալ բանքն են ի Յակոբայ Շամախեցույ, որոց սկիզբն է ՌՃՁԸ (1739) թվականիս մերում, յորում վախճանեցաւ թէթիրդաղցի լուսահոգի կաթողիկոսն» (խոսքը Աբրահամ Կրեւացու մասին է):

Մարգարի որդի Հովհաննեսին: Հաշվեմատյանի մեջ գրանցված է մեկ կողմից Շահվելու և նրա որդիների, մյուս կողմից՝ վերոհիշյալ աղա-պարոնների միջև կնքված պայմանագրի համառոտ բովանդակությունը, որը հետաքրքրական տվյալներ է պարունակում հայ խոջայական վերնախավի և նրանց դրամա-դիտով առևտրի ասպարեզ մտած գործակատար-վաճառականների փոխհարա-բերությունների մասին:

Անհրաժեշտ ենք համարում ամբողջապես մեջ բերել հաշվեմատյանի այդ տողերը:

«Ըսպահան, խօջայ Ոհանի որդիք աղայ պարոն Մուրադէն, պարոն Յակոբջանէն և խոջա Մարգարէ որդի Յովանիսէն ԹՃ. (900) թուման ապասի ես՝ Բանդորի որդի Շահվէլիս և ես Շահվէլէ որդիք Սարհադս և խօջամալս սարմայեայ վեռինք, որ աստուծով տանենք թուշարաթ բանացանենք: Ինչ որ ըստեղծող ամենայնի տեր աստուածն շախ պարգեւի՝ ՀՃՀԵ. (675) թումանի շախն վերոյ ԹՃ. (900) թումանին սարմայովն վերոյ մեր աղէք պարոն Մուրադին, պարոն Յակոբջանին, պարոն Յովանիսին լինի, ԱՃԾ. (150) թումանի շախն ինձ՝ Բանդորի որդի Շահվէլոյս լինի, Կ. (60) թումանի շախն ինձ՝ Սարհագիս լինի, ԺԵ. (15) թումանի շախն ինձ՝ խօջամալիս լինի: Տէր Յիսուսն բարի աջողումն տայ. խեր ոյ շառն ի ձեռն աստուծոյ այ: Սարմայէն տվին, մեզ հասավ ԹՃ. (900) թուման»¹²:

Այսպիսով, վերոհիշյալ խոջաները Բանդորի որդի Շահվելու և նրա որդիների՝ Սարհադի և խօջամալի տրամադրության տակ են դնում 900 թուման դրամագլուխ, այն պայմանով, որ նրանք այդ գումարով Իրանում և Անդրկովկասում գնումներ կատարեն, մեկնեն Ռուսաստան ու Եվրոպա, առևտրական գործունեություն ծավալեն, ստացված շահի 75 տոկոսը պարոններին մատուցելու և 25 տոկոսը միայն իրենց ընտանիքի անդամների միջև (հետևյալ համամասնությունով՝ Շահվելուն 16,6 տոկոս, ավագ որդուն՝ Սարհադին, 6,8 տոկոս, կրտսեր որդուն՝ խօջամալին, 1,6 տոկոս) բաժանելու պայմանով:

Շահ Հուսեյնի օրոք (1694—1722) Իրանում շրջանառության մեջ եղող հիմնական դրամական միավորը աբբասի կոչվող արծաթ դրամն էր, որ 200 դիանի համարժեք էր և թումանի $\frac{1}{50}$ մասն էր կազմում: Աբբասին պարունակում էր 90—92 հարգի 7,3 գ արծաթ, ուստի մեկ թումանը համարժեք էր 365 գ արծաթի¹³:

Այսպիսով, 900 թումանը խոշոր գումար էր (328,5 կգ արծաթի համարժեքով), որ Շահվելուն և նրա որդիներին հնարավորություն էր տալու մեծաքանակ գնումներ կատարել՝ Ռուսաստան ու Եվրոպա տանելու համար:

Հաշվեմատյանի գրանցումների մեջ ուշագրավ տվյալներ կան Շահվելու, ինչպես նաև բազմաթիվ այլ հայ և օտարադղի վաճառականների գործունեության մասին, սակայն իր մեծագույն մասով այն ներկայացնում է մատյանի

¹² Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N° 6241, էջ 1բ:

¹³ Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и Закавказья (Труды о-ва обследования и изучения Азербайджана, вып. 3), Баку, 1926, էջ 33: նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իրանում և Ռուսաստանում կատարված առևտրական գործարքների բոլոր հաշիվները հաշվեմատյանում տրված են թումանով և դիանով, պարզության համար նպատակահարմար ենք գտել բոլոր անհրաժեշտ դեպքերում, փակագծի մեջ նշել տվյալ գումարին համարժեք արծաթի կշիռը:

հեղինակ Սարհադի գործունեության պատկերն ամենայն մանրամասնությամբ:

Համառոտ ցույց տանք Սարհադի երթուղին: Ըստ հաշվեմատյանի, 1712 թ. օգոստոսի 2-ին (ըստ Ազարիայի տոմարի՝ Ղէ թվականի դամար ամսի 14-ին)¹⁴ անցնելով Շամախիով և նալ բարձրանալով Նիզովոյ նավահանգրստում, Սարհադը ժամանում է Աստրախան: Այնուհետև, անցնելով Սարատով և Լոմովկա¹⁵ քաղաքներով, նույն թվականին հասնում է Մոսկվա, այստեղից էլ ճանապարհովում Արխանգելսկ, ապա՝ Ամստերդամ: 1713 թ. փետրվարի 5-ից մինչև 1714 թ. ապրիլի 19-ը Սարհադը մնում է Ամստերդամում, որտեղ վաճառում է իր տարած ապրանքները և զնում մեծ քանակությամբ եվրոպական ապրանքներ:

1714 թ. ապրիլի 19-ին դուրս է գալիս Ամստերդամից և օգոստոսի 6-ին հասնում Արխանգելսկ: 1714 թ. օգոստոսի 9-ին լինում է Վոլոգդայում, օգոստոսի 14-ին կրկին վերադառնում է Արխանգելսկ և ապա՝ Մոսկվա: 1716 թ. նոյեմբերի 12-ին նրան կրկին գտնում ենք Ամստերդամում: Վերադառնում է Աստրախան և 1717 թ. օգոստոսի 18-ին հասնում Շամախի, որտեղ հանդիպում է իր հորը՝ Շահվելուն: 1717 թ. հոկտեմբերի 17-ին մեկնում է Թավրիդ, իսկ 1718 թ. օգոստոսի 1-ին՝ կրկին Շամախի:

Իր այս թափառումների ընթացքում Սարհադը հանդիպում է և տնտեսական գործարքների մեջ մտնում մի քանի տասնյակ հայ և օտարազգի վաճառականների, պետական պաշտոնյաների և արդյունաբերողների հետ: Հաշվեմատյանի էջերում, երբեմն բազմաթիվ անգամներ, հիշատակվում են Մոսկվայի նահանգապետ Նարիշկինը, իշխան Վասիլի Դոլգոռուկին, Բվան Պոպովը, Իվան Կորոտկովը, Անդրեյ Ժիտկովիչը, Իվան Մուշնիկովը, Դմիտրի Իվանովիչը և ուրիշներ: Եվրոպացիներից՝ Դիլմար Ֆանդերսթոթը, Յան Դմանեն, Յան Ֆանհոստրեն, Յոհաննես Կատմանը, Յոհաննես Անեպրեկը, Կոռնելիս Ֆելկները և ուրիշներ: Հայերից՝ թավրիզեցի Արզանի որդի Մելքումը, աստրախանցի դերձակ էվադը, երևանցիներ Մեսրոպի որդի Բարսեղը և Հերոմի որդի Մկրտումը, Մարտիրոսի որդի Աղաջանը, Տեր-Պողոսի որդի Ծատուրը, Սուքիասի որդի Հարությունը, Թաթոսի որդի Մկրտումը և շատ ուրիշներ:

Հատկապես հետաքրքրական է Սարհադի կապը Գիլանենց Սարգսի որդի Պետրոսի կամ, ինչպես ինքն էր իրեն անվանում, Պետրոս դի Սարգիս Գիլանենցի հետ, որը հայտնի է որպես «Հայկական էսկադրոնի» ստեղծող ու քաջարի հրամանատար: Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ Սար-

¹⁴ Ժամանակագրական տվյալները, գրեթե առանց բացառության, տրված են ջուղահայ առևտրականների միջավայրում գործածվող Ազարիայի տոմարի համաձայն, որի առաջին տարին համընկնում է 1616 թ. հետ և որի տարեակիզբն ընկնում է մարտի 21-ին: Տարին բաղկացած է 30 օր պարունակող 12 ամիսներից և մեկ հավելյալ ամսից՝ 5 օր տևողությամբ (Շամս, Աղամ, Շրաթ, Նախա, Ղամար, Նադար, Թիրա, Դամա, Համիրա, Արամ, Ովդան, Նիրհան, Ավելյաց): Այս տոմարի մասին տե՛ս Բ. Ե. Թումանյան, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965, էջ 38: Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 1178—1186:

¹⁵ Հավանաբար Նիժնի Լոմով քաղաքն է, Պենդայի նահանգում:

հաղը ևս ուսական կողմնորոշման դործիչ էր և Պետրոս Գիլանենցի համախոհներից մեկը¹⁶:

Ինչպես և սպասելի էր, Սարհադի և նրա հետ կապված հայ վաճառականների՝ Իրանից արտահանած ապրանքների մեջ կարևորագույն տեղը գրավում էր հում մետաքսը: Մետաքսի հումքի վերաբերյալ հաշվեմատյանի տարբեր հատվածներում գրանցված բոլոր տեղեկությունները համախմբելով ստանում ենք հետաքրքրական պատկեր: Պարզվում է, որ 1712—1718 թթ. ընթացքում Սարհադն իր հոր՝ Շահվելու և գործընկերների օժանդակությամբ Իրանից Ռուսաստան և այնուհետև Հոլանդիա է արտահանել ու վաճառել 132 հակ մետաքսի հումք, 15.487 կգ ընդհանուր քաշով, որի դիմաց վճարվել է ավելի քան 2500 թուման գումար (910 կգ բարձրորակ արծաթի համարժեք):

Հաշվեմատյանի տարբեր հատվածներում կան մետաքսի հումքի գնումների, փոխադրումների, մաքսատներում վճարված տուրքերի և վաճառքի մասին մի քանի տասնյակ գրանցումներ, որոնք վերաբերում են ընդամենը ինը նվազով Իրանից Ռուսաստան տարված մետաքսի հումքի բեռներին: Ստորև անհրաժեշտ տեղեկություններ ենք տալիս դրանց մասին, հերթականության հիմք ընդունելով մետաքսի հումքի հակերի քանակն ու կշիռը¹⁷:

1. Մետաքսի հումքի ամենախոշոր առաքումը կատարվել է 1716 թ. հունվարին, Շամախի քաղաքից: Գնվել է 37 հակ մետաքսի հումք, 622 լիտր կամ 4790 կգ կշռով: Ընդ որում 32 հակը 17-ական լիտր կշռով, իսկ 5 հակը՝ 20-ական լիտր: Յուրաքանչյուր լիտր մետաքսի հումքի դիմաց վճարված դրամի մասին հաշվեմատյանում տեղեկություն չի գրանցված, բայց հայտնի է, որ մինչև Նիզովոյ նավահանգիստ հասցնելուց և նավի վրա բարձելուց հետո մետաքսի հումքի վերահիշյալ քանակությունը գնորդի վրա նստել է 800 թուման 9845 դիան, որը համարժեք է 292,3 կգ արծաթի: Այդ ապրանքը Աստրախանից մինչև Արխանգելսկ տեղափոխելու համար ծախսվել է 185 թուման 745 դիան, իսկ Նիզովոյից մինչև Աստրախան և Արխանգելսկից մինչև Ամստերդամ ծախսվել է 272 թուման 766 դիան: Այսպիսով, 622 շամախու

16 Պետրոս Գիլանենցը հիշատակված է հաշվեմատյանի մեջ մի քանի անգամ (տե՛ս հաշվեմատյանի 3բ, 20բ և 21ա էջերը): Պարզվում է, որ 1713 թ. փետրվարի 26-ին (նիրհան ԺԲ-ին) Սարհադի հայրը Մոսկվայում ոմն Քալանթարի որդի Հովհաննեսից 40 թուման դրամ է վերցրել, դրա դիմաց գրավական տալով 2 հակ շամախու մետաքս, պայմանով, որ 105 օր հետո այդ մետաքսը Ամստերդամում հանձնվի Սարհադին, իսկ Սարհադը 40 թումանի պարտքը (իր տոկոսներով) մարի՝ Գիլանենց Սարգսի որդի Պետրոսին վճարելով 1560 գովգեն: Ըստ այդմ տեղեկություն ենք ստանում, որ Պետրոս Գիլանենցը նույնպես Ռուսաստանի վրայով Հոլանդիա մետաքս արտահանող հայ վաճառականներից էր և Ամստերդամում էր գտնվում 1714 թ. հունիսի 7-ին (ադամ ԻԱ-ին):

17 Արևելյան տարբեր երկրներում, ինչպես նաև միևնույն երկրի տարբեր նահանգներում գործածվում էին չափ ու կշռի տարբեր միավորներ: Ըստ այդմ, Սարհադի հաշվեմատյանի մեջ Իրանից արտահանվող մետաքսի հումքի կշիռը տրված է կշռի երեք տարբեր միավորներով՝ շահի լիտրով (մանի շահ), Շամախու լիտրով և Գիլանի լիտրով: Հայտնի է, որ շահի լիտրը XVIII դարի սկզբին կշռորդ էր 5,8 կգ (տե՛ս В. М. Хниц, Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, М., 1970, էջ 30): Շամախու և Գիլանի լիտրերի մետրական համարժեքները չափագիտական աշխատությունների մեջ չեն պարզաբանված: Հաշվեմատյանի և այլ տվյալների համադրումից մեզ հաջողվել է պարզել, որ Շամախու լիտրը կշռորդ է 7,7 կգ, իսկ Գիլանի լիտրը՝ 4,5 կգ: Ծիշտ այդքան է նաև Թավրիզի լիտրը կամ մեծ մանը (տե՛ս Ф. И. Петрушевский, Общая метрология, СПб., 1849, ч. 1, էջ 388):

լիտր (4 տոննա 790 կգ) մետաքսի հումքը Շամախուց մինչև Ամստերդամ հասցնելը նստել է 1258 թուման 8250 դիան կամ յուրաքանչյուր 1 կգ մետաքսի հումքը՝ 2620 դիան (95,6 գ արծաթ)։

2. Մետաքսի հումքի մյուս խոշոր առաքումը կատարվել է 1712 թ. մայիսին, պարունակել է 523 շահի լիտր ու 34 ստիլ (այսինքն 3 տոննա 33 կգ) կշիռ ունեցող 30 հակ Շամախու մետաքս։ Այս անգամ ևս տեղեկություն չունենք, թե ինչ է վճարված անմիջական արտադրողին կամ միջնորդ վաճառականին մետաքսի հումքի այդ քանակությունը ձեռք բերելու համար։ Բացառված չէ, որ Սարհադը 3 տոննայից ավելի այդ մետաքսի հումքը գնել է անմիջապես Շամախու խանից, որը մեծ չափով մասնակցում էր առևտրական գործարքներին, սերտ կապերի մեջ լինելով հայ խոջայական կապիտալի ներկայացուցիչների հետ։ Ստույգ գիտենք, որ Նիզովոյ նավահանգիստ հասնելուց և պահանջվող մաքսային վճարումները կատարելուց հետո 30 հակ այդ մետաքսի հումքի համար Սարհադը վճարել է 478 թուման 3870 դիան կամ 174,6 կգ արծաթ։

Շուրջ մեկ տարի հետո՝ 1713 թ. փետրվարի 5-ին, այս մետաքսի հումքից 6 հակը Սարհադի հայրը՝ Շահվելին, վաճառել է Մոսկվայում, իսկ մնացած 24 հակը, 420 շահի լիտր (2 տոննա 436 կգ) կշռով, նույն թվականի հունիսի 9-ին ուղարկում է Ամստերդամ, ուր վաճառվում է տարբեր մարդկանց, տարբեր չափերով, ընդամենը 25587 գուլդեն գումարով¹⁸։

3. Իր մեծությամբ հաջորդ տեղը գրավում է 1717 թ. օգոստոսին (մինչև Սարհադի Իրան վերադառնալը) 473 թուման 7560 դիան (172,9 կգ արծաթ) գումարով գնված 26 հակ Շամախու մետաքսի հումքը, որի քաշը եղել է 443 լիտր (3 տոննա 411 կգ)։ Այս անգամ հաշվեմատյանի մեջ տեղեկություն կա այն մասին, թե որքան գումար է վճարված մետաքսի հումքի այս 26 հակը Նիզովոյ նավահանգիստ փոխադրելու համար։ Այդ գումարը կազմում է ընդամենը 7 թուման 2030 դիան կամ մետաքսի հումքի արժեքի շուրջ 1,5 տոկոսը։

4. Ինչպես արդեն նշվել է, 1712 թ. հունվարին վերոհիշյալ խոջաների հետ պայմանագիր կնքելով, Շահվելին և հատկապես, նրա որդին՝ հաշվեմատյանի հեղինակ Սարհադը, ստացած 900 թումանով սկսում են ապրանքներ գնել Ռուսաստան տանելու համար։ Գնված ապրանքներից մետաքսի հումքը դասավորում են 132 հակերի մեջ, որոնց շարքում, ըստ արժեքի ու կարևորության, կենտրոնական տեղ է գրավում 13 հակ Գիլանի¹⁹ մետաքսի հումքը, որի 6 հակը 25-ական լիտրանոց է, իսկ 7 հակը՝ 20-ական, ընդամենը՝ 290 Գիլանի լիտր կամ 1 տոննա 405 կգ։ Այդ քանակության մետաքսի հումքի դիմաց վճարվել է շուրջ 300 թուման դրամ (109,39 կգ արծաթ)։ Աստրախանից մինչև Արխանգելսկ փոխադրավարձ, մաքս և այլ վճարումներ են կատարվել և ծախսեր արվել շուրջ 60 թումանի չափով (59 թուման 8565 դիան)։ Աստրախանից մինչև Ամստերդամ ծախսերի գումարը կազմել է 840 գուլդեն 14 ըսկ։ Ապրանքը վաճառվել է Ամստերդամում 21,575 գուլդենով։

¹⁸ Պետք է նշել, որ գուլդենը այդ ժամանակ 10,632 գ 88 հարգի արծաթ էր (տե՛ս Փ. Ի. Петрушевский, նշվ. աշխ., II մաս, էջ 63)։ Գուլդենի 1/20 մասը կոչվում էր ըսկ։

¹⁹ Գիլանը տալիս էր Իրանի մետաքսի ամբողջ արտադրանքի համարյա 50 տոկոսը։

5. Հաջորդ մասնաշափը եղել է 1712 թ. մայիսի 13-ին Սարհադի գնած 7 հակ Շամախու մետաքսի հումքը, 55 լիտր (423,5 կգ) քաշով, որի դիմաց (մինչև նիզովոյ փոխադրավարձի և մյուս վճարումների հետ միասին) վճարվել է 52 թուման 8015 դիան (19,2 կգ արծաթ)։ Հաշվեմատյանի մեզ հասած թերթերի մեջ տվյալներ չեն պահպանվել այս 7 հակ մետաքսի հումքի հետագա փոխադրումների և վաճառքի մասին։

6. 1713 թ. աշնանը, Ամստերդամում գտնված ամիսներին, Սարհադը երկու նվազով (նախ՝ 3 հակ, ապա՝ 2 հակ) մետաքսի հումք է ստանում՝ 1312 ֆունտ (637,2 կգ) ընդհանուր կշռով, որ վաճառում է 4394 գուլդեն 15 ըսկով։ Հաշվեմատյանում տվյալներ կան այն մասին, որ վերոհիշյալ 5 հակ մետաքսի հումքի փոխադրման ծախսերն ու մաքսատուրքերը Աստրախանից մինչև Արխանգելսկ կազմել են 21 թուման 5890 դիան, իսկ Արխանգելսկից մինչև Ամստերդամ՝ 325 գուլդեն։

7. 1714 թ. Արխանգելսկում գտնված ժամանակամիջոցում Սարհադը մի քանի նվազով ապրանքներ է ուղարկում Ամստերդամ, իրենց հետ առևտրական սերտ կապի մեջ գտնվող դալալ Թևանի որդի Մարկոսի հասցեով, այնտեղ վաճառելու համար։ Այդ առաքումների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում մետաքսի հումքի բեռները։ Մեկ անգամ արտահանվել է 5 հակ Շամախու մետաքսի հումք, 39 փութ 4,5 ֆունտ (639,8 կգ) կշռով և 146 թուման 4720 դիան (53,4 կգ արծաթ) արժեքով, իսկ մյուս անգամ՝ 6 հակ։ Այս 6 հակը գնել է Սարհադի հայր Շահվելին Շամախիում. կշիռն է 106 լիտր 40 ստիլ, կամ 50 փութ 10 ֆունտ (այսինքն՝ 823 կգ)։ Վճարել է (նիզովոյ նավահանգիստ հասցեելու և նավի վրա բարձելու համար ծախսված գումարները նույնպես հաշված) 77 թուման 5045 դիան (28,2 կգ արծաթ)։ Աստրախանից մինչև Արխանգելսկ ճանապարհածախսը, մաքսատուրքերն ու այլ ծախսերը կազմել են 28 թուման 3640 դիան (10,3 կգ արծաթ)։ Արխանգելսկից Ամստերդամ ուղարկելու ժամանակ այդ 6 հակի վրա ծախսված դրամի հանրագումարը կազմել է 135 թուման 6750 դիան²⁰։

8. Բացի վերոհիշյալ տվյալներից, հաշվեմատյանի մեջ կան ևս մի քանի տեղեկություններ ավելի փոքր քանակությամբ մետաքսի հումքի գնումների և առաքումների մասին։ Օրինակ, 1717 թ. Սարհադը 61 թուման 3100 դիան (22,4 կգ արծաթ) վճարելով գնում է 55 լիտր (423,5 կգ) «շարբաֆի» կոշվող լավորակ մետաքսի հումք (3 հակ) և Իսկանդարի հետ ուղարկում է Ռուսաստան։ Տեղեկություն ունենք նաև ոչ թե հակով, այլ «բողչալով» արտահանված մետաքսի հումքի մասին։ 1712 թ. հունիսի 6-ին Սարհադը 1 թուման 6965 դիանով գնել է մեկ «բողչա» մետաքսի հումք, որի քաշը եղել է 1 լիտր 29 ստիլ։

Մենք հնարավորություն չունենք ավելի հանգամանորեն անդրադառնալու մետաքսի հումքի վերը թվարկված առաքումների մասին առկա բոլոր տեղեկություններին։ Նշենք միայն, որ հաշվեմատյանի մեջ հանդիպում են տրվյալներ նաև տնտեսական ու կենցաղային տարբեր մանրամասնությունների

²⁰ Ուշագրավ այս տվյալով թերևս կարելի է պարզել նիզովոյ նավահանգստից մինչև Աստրախան փոխադրության հետ կապված ծախսերի չափը, որոնց մասին գրանցում չի կատարված։ Վերոհիշյալ 135 թուման 6750 դիանից պետք է հանել 77 թուման 5045 դիան + 28 թուման 3640 դիան։ Ստացված 29 թուման 8065 դիանը կլինի նիզովոյից Աստրախան ծախսած գումարը։

մասին: Օրինակ, որքան դրամ է վճարվել բեռնակիրներին ապրանքը նավից իջեցնելու և նավակներով ծովափ փոխադրելու, պահեստում պահ տալու և համանման «երկրորդական» նշանակություն ունեցող գործողությունների համար: Հասկանալի է, որ պատմատնտեսագիտական մանրակրկիտ հետազոտություններ կատարելու համար այդ կարգի տեղեկությունները նույնպես հետաքրքրական են ու արժեքավոր:

Ռուսական արքունիքի և ջուղահայ առևտրական ընկերության միջև 1667 թ. կնքված և հետագա տարիներին ձգգրտված պայմանագրի նախատեսումներով Իրանից Ռուսաստան ներմուծվող բարձրորակ մետաքսի հումքի (ռուսերեն կոչվում էր ЛЕЗН) յուրաքանչյուր փուլը Աստրախանում գնահատվում էր 20 ռ., որից գանձվում էր 5 տոկոս մաքս: Մոսկվայում նույնը գնահատվում էր 30 ռ. և նույնպես գանձվում 5 տոկոս մաքս, իսկ Արխանգելսկում, մինչև երկրից դուրս բերվելը, նույն մեկ փուլի արժեքը դառնում էր արդեն 40 ռ., որից նույնպես գանձվում էր 5 տոկոս մաքս²¹: Ըստ այդմ, բարձրորակ մետաքսի հումքի մեկ փուլը Ռուսաստանի վրայով Աստրախանից մինչև Արխանգելսկ տեղափոխելու ընթացքում արքունի գանձարանը ստանում էր 4 ռուբլի 50 կոպեկ մաքս²²:

Հիմք ունենալով այս տվյալները, հեշտությամբ կարելի է հաշվել այն գումարը, որ Սարհադը (իր գործընկերների հետ միասին) վճարել է արքունի գանձարան 1712—1717 թթ. ընթացքում Ռուսաստանի վրայով արտահանած կամ հենց Ռուսաստանում վաճառած մետաքսի հումքի դիմաց:

Հիշենք, որ Ռուսաստանի վրայով Հոլանդիա է արտահանված ընդամենը 14887 կգ կամ 930 փուլ բարձրորակ մետաքսի հումք, որն Արխանգելսկում, ըստ պայմանագրի վերոհիշյալ հրահանգների, պետք է գնահատվեր 83700 ռ. (յուրաքանչյուր փուլը 90 ռ. հաշվով), որից գանձված մաքսը կազմելու էր 4185 ռ., իսկ Մոսկվայում վաճառված 600 կգ կամ 37,5 փուլ մետաքսի հումքի դիմաց գանձված պիտի լինի շուրջ 95 ռ.: Ընդամենը արքունի գանձարանը, միայն մետաքսի հումքի արտածումից, Բանդորյան ընտանիքից գանձած պետք է լիներ 4280 ռ. մաքս (մոտ 122 կգ արծաթ)²³:

21 Տե՛ս 1667 թ. Ռուսաստանի և հայկական առևտրական ընկերության միջև կնքված պայմանագիրը («Армяно-русские отношения в XVII веке», էջ 62—63), ինչպես նաև 1711 թ. վերանայված պայմանագիրը («Армяно-русские отношения в XVIII веке», էջ 48—49):

22 Ցածրորակ (ардаш կոչվող) մետաքսի մեկ փուլի դիմաց գանձվում էր ընդամենը 3 ռ. 10 կ.:

23 Այս գումարի ղեկավարության մասին մոտավոր գաղափար կազմելու համար նշենք, որ Պետրոս I-ի ժամանակաշրջանում մետաղարդյունաբերական ձեռնարկություններում աշխատող ռուս վարպետների տարեկան աշխատավարձը կազմում էր 20—120 ռ., իսկ սեագործ բանվորներինը՝ ընդամենը 1 ռ.—1 ռ. 47 կ.: Տեքստիլ արդյունաբերության մեջ ռուս վարպետը ստանում էր տարեկան 30 ռ.: Մոսկովյան գավառի Չեռնոգոլովյան շրջանի բյուրեղապակու ֆարրիկայում աշխատող բանվորների վարձատրության վերաբերյալ ունենք հետևյալ տեղեկությունը. «Рабочие наймываются понедельно и помесечно, дается им во время работы на неделю по 10 копеек человеку...» (տե՛ս Ե. Ի. З а о з е р с к а я, Мануфактура при Петре I, М.—Л., 1947, էջ 117, 119): Կան նաև ավելի ուշ ժամանակաշրջանի վերաբերող հետաքրքիր տեղեկություններ: 1734—1775 թթ. Ուկրաինայում ձին միջին հաշվով գնահատվում էր 7—10 ռ., կովը՝ 5—8 ռ., ցորենի մեկ չետվերտը՝ 2 ռ. 50 կ.—4 ռ. 50 կ., մեկ ֆունտ խոզի ճարպը՝ 12 կ., հասարակ շապիկը՝ 40 կ. և այլն (տե՛ս В. А. Г о л о б у ц к и й, Запорожское казачество, Киев, 1957, էջ 372: Այս կրթից տեղեկանում ենք, որ բանվորի մեկ

Ինչպես արդեն նշել ենք, մետաքսի հումքի առաքումներից յուրաքանչյուրի մասին հաշվեմատյանի տեղեկությունները համառոտակի թվարկելու ժամանակ, Ռուսաստան ներմուծվող մետաքսի հումքի մեծագույն մասը նախատեսված էր Արխանգելսկի վրայով Հոլանդիա փոխադրելու համար: Ռուսաստանում XVIII դարի 10-ական թթ. միայն, Պետրոս I-ի նախաձեռնությամբ, սկսում էին հիմնադրվել մետաքսի ֆաբրիկաներ և այդ գործում մեծ մասնակցություն էին ցուցաբերում հայ ձեռնարկասերներն ու վաճառականները²⁴: Մետաքսարդյունաբերության ոչ զարգացած վիճակի հետևանքով Ռուսաստանում մետաքսի հումքի մեծ պահանջարկ չկար և ներմուծվող մետաքսի հումքից Մոսկվայում վաճառվում էր շնչին մի քանակություն:

XVIII դարի 30—40-ական թթ. Ռուսաստանում, հիմնականում Մոսկվայում, մանուֆակտուրայի զարգացման կապակցությամբ մետաքսի հումքի նկատմամբ շատ ավելի մեծ պահանջ է առաջանում: Մոսկվայի մետաքսարդյունաբերությունը կլանում էր Ռուսաստան ներմուծվող պարսկական գրեթե ամբողջ մետաքսի հումքը, որն այդ տարիներին կազմում էր մոտ 3 հազ. փուֆ, այսինքն մոտ 50 տոննա²⁵:

Անդրադառնանք հաշվեմատյանի այն տվյալներին, որոնք վերաբերում են Մոսկվայում վաճառված մետաքսի հումքին:

1712 թ. ներմուծված 30 հակ Շամախու մետաքսի հումքից Մոսկվայում, 176 թումանով (64,2 կգ արծաթ), վաճառվել է 103 շահի լիտր կամ շուրջ 600 կգ մետաքս, որը գնվել էր 94 թուման գումարով (34,3 կգ արծաթ): Հայտնի է նաև, որ մեկ «բողչա» (1 լիտր 29 ստիլ կշռով) մետաքսի հումքը, որ գնվել էր 1 թուման 6965 դիանով, Մոսկվայում վաճառվել է 3 թումանով: Այս տվյալները տնտեսագիտական հաշվարկների համար օգտակար նյութ կարող են դառնալ միայն այն դեպքում, երբ հնարավոր լինի (թեկուզ մոտավոր չափով) պարզել, թե ինչ ծախսեր են կատարվել մետաքսի հումքի այդ մասնաքանակի վրա՝ Իրանից Մոսկվա փոխադրելու ընթացքում: Ցավոք, դրանց փոխադրավարձի և հարակից ծախսերի մասին հաշվեմատյանում տվյալներ չեն գրանցված, ուստի օգտվելու ենք այլ առաքումների մասին առկա գրանցումներից: Այս առումով հետաքրքրական են մետաքսի հումքի բեռների առաքման մեր ցանկի առաջին և չորրորդ գրանցումները, որոնց համաձայն Աստրախանից Արխանգելսկ մետաքսի հումքի փոխադրումների համար միջին հաշվով վճարում էին ապրանքի ձեռք բերման համար վճարված

տարվա աշխատավարձը միջին հաշվով կազմում էր 3 ռ. 50 կ., իսկ օրական աշխատավարձը՝ 1 կ. (նույն տեղում, էջ 370):

²⁴ Е. И. Индова, О российских мануфактурах второй половины XVIII в., М., 1975, էջ 249—345: Այս աշխատության մեջ ուշագրավ տեղեկություններ կան հայ ձեռնարկատերերի մասին: Բերենք մի քանի օրինակ քաղված ռուսական ֆաբրիկաների մանուֆակտուրային գիտյի տեղեկագրից: Ըստ այդ փաստաթղթի մետաքսի արդյունաբերության գծով Ռուսաստանում զբաղվել են հետևյալ հայերը. Իգնատի Ֆրանցովը, 20.000 ռ. կապիտալով, Մոսկվայում կադարյանները՝ 50.000 ռ. կապիտալով, Աստրախանում՝ Պետրոս Վարտինովը (4660 ռ.), Ռեպազ Ջալիկը (8000 ռ.), Առաքել Իսաևը (5000 ռ.), Իգնատի Իվանովը (5000 ռ.), Ղզլարում՝ Նաֆար Վասիլևի թոռը՝ Վասիլի Խաստատովը (10.000 ռ.) և ուրիշներ:

²⁵ Е. Н. Кушева, Торговля Москвы в 30—40-х годах XVIII в., «Исторические записки», т. 23, М., 1947, էջ 70:

գումարի (ավելի ձիշտ՝ մինչև նիզովոյ նավահանգիստը տանելու և նավի վրա բարձելու համար վճարված գումարի) շուրջ 20—22 տոկոսը²⁶։

Վերոհիշյալ երկու օրինակները քննարկելիս պետք է հաշվի առնել, որ առաջին դեպքում 600 կգ մետաքսի հումքի դիմաց Սարհադը վճարել է 94+18,8, այսինքն՝ 112,8 թուման։ Ուստի, վաճառելով Մոսկվայում 176 թումանով, Սարհադը շահել է ընդամենը 63,2 թուման կամ արժեքի 64 տոկոսի չափով։

Գրեթե նույն արդյունքին ենք հասնում մյուս տվյալը քննարկելիս։ Մեկ «բողչա» մետաքսի հումքի դիմաց Սարհադը վճարել է 1 թուման 6965 դիան։ 20 տոկոսի հավելումով (այսինքն ճանապարհածախսը և այլ ծախսերը հաշվի առած) այդ գումարը աճում է և հասնում 2 թուման 3500 դիանի։ Մոսկվայում վաճառել է 3 թումանով, ուստի շահը կազմում է 9650 դիան կամ արժեքի շուրջ 63 տոկոսը։

Այժմ համառոտակի անդրադառնանք Իրանից Ռուսաստան արտահանած և հենց այդտեղ վաճառած մի քանի այլ ապրանքների մասին հաշվեմատյանում գրանցված տեղեկություններին։

Արևելյան երկրներից Ռուսաստան ներմուծվող ապրանքների մեջ միշտ էլ խոնկը որոշակի տեղ է գրավել։ Լավատեղյակ լինելով այդ մասին, Սարհադը իր հետ Ռուսաստան է տարել վաճառելու 80 շահի լիտր կամ 28 փութ 15 ֆունտ (464 կգ) խոնկ։ Մինչև նիզովոյ նավահանգիստը հասցնելն ու նավի վրա բարձելը այդ խոնկի համար Սարհադը վճարել է 9 թուման 1260 դիան։ 1 թուման 7315 դիան էլ կազմել է Աստրախանում վճարված գումարը (մաքս և այլն)։ Այսպիսով, խոնկի վրա ծախսված է ընդամենը 10 թուման 8575 դիան։ Սարհադին հաջողվում է այդ ապրանքը վաճառել հենց Աստրախանում, 16 թուման 5125 դիան գումարով, շահելով 5 թուման 7550 դիան, որը կազմում է արժեքի մոտ 53 տոկոսը։

Իրանից արտահանվող և Ռուսաստանում վաճառվող ապրանքների մեջ կարևոր տեղ են գրավել նաև ալմաստը, մարգարիտը, աղեղը (сердолик)՝ իր տարբեր տեսակներով և այլն։ Հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ Սարհադը Սպահանում, վճարելով 7 թուման 9580 դիան, գնել է 2990 հատ «նիկինի կարմիր աղեղ», 151 շար «թաղբեհի աղեղ» և այլ թանկագին քարեր։ Տեղին է նշել, որ ներմուծվող թանկարժեք քարերից Ռուսաստանում մաքս չէր գանձվում, և այդ ևս արվում էր այն նպատակով, որ հայ վաճառականները, հրաժարվելով Թուրքիայի վրայով կատարվող առևտրից, գերադասեն միջազգային ապրանքափոխանակության ուսական ուղին²⁷։ Վերոհիշյալ թանկագին քարերի մի մասը Սարհադը վաճառում է Աստրախանում, իսկ մյուս մասը՝ Մոսկվայում, ընդհանուր հաշվով 17 թուման 3000 դիան գումարով, շահելով 9 թուման 3420 դիան։ Տվյալ դեպքում շահը կազմում է

²⁶ Առաջինի մեջ ասված է, որ 800 թումանի արժողությամբ 37 հակի փոխադրական ծախսերը կազմել են 185 թուման, երկրորդի (300 թումանի արժողության մետաքսի) դեպքում՝ 60 թուման։

²⁷ Սենատի 1711 թ. մայիսի 2-ի հրամանագրի մեջ ոչ միայն վերահաստատված էր հայերին տրված այդ արտոնությունը, այլև հատուկ շեշտված, որ ալմաստի, մարգարիտի և այլ թանկագին քարերի համար հայ առևտրականները մաքս չեն վճարելու, որպեսզի «в привозе таких вещей», «подать им, армянам, охоту» (տե՛ս В. П. Лысцов, նշվ. աշխ., раздел I, глава 1, § 2 (Полное собрание законов, т. IV, № 2356)).

շուրջ 20 տոկոս: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ թանկագին քարերի փոխադրությունը անհամեմատ հեշտ էր մեծածավալ ու մեծ կշիռ ունեցող ապրանքների համեմատությամբ, պարզ կդառնա, թե ինչու հայ վաճառականներից շատերը իրենց առևտրական գործարքների մեջ կարևոր տեղ էին հատկացնում դրան:

Անհրաժեշտ է վերհիշել, որ Սարհադն իր հոր, եղբոր և իր հետ առնչություն ունեցող ուրիշ հայ վաճառականների նման շահույթի մի շնչին մասի տերն էր միայն, հանդիսանալով Սպահանում նստած մեծահարուստ խոջաների՝ աշխարհի տարբեր ծայրերում առևտուր անող և ինքնուրույն դրամագլխից զուրկ գործակատարներից մեկը: Մտացված ողջ շահույթի 75 տոկոսը պատկանում էր այդ խոջաներին և 25 տոկոսը միայն՝ Բանդորյան ընտանիքի անդամներին՝ Շահվելուն, Սարհադին և խոջամալին (որից Սարհադի բաժինը ընդամենը 6,8 տոկոս էր):

Սարհադի հաշվեմատյանի պատմատնտեսագիտական ողջ նշանակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է հատուկ հոգվածով անդրադառնալ Ռուսաստանից, ինչպես նաև եվրոպական երկրներից (Ռուսաստանի վրայով) Իրան ներմուծվող ապրանքների մասին այդ սկզբնաղբյուրի մեջ գրանցված մեծարժեք տեղեկություններին: Հատուկ հոգվածի համար առատ նյութ կարող են մատակարարել նաև վաշխառուական բաղմաթիվ գործարքների մասին այն տեղեկությունները, որ ցրված են հաշվեմատյանի բոլոր մասերում, վերաբերելով Սարհադի թե՛ Ռուսաստանում և թե՛ Եվրոպայում եղած տարիներին, երբ նա դրամական տարբեր բնույթի գործարքների մեջ է մտել հայ և այլազգի տասնյակ վաճառականների հետ, պարտքով ապրանք վաճառել, կարճաժամկետ կամ երկարաժամկետ պարտքով դրամ վերցրել կամ պարտք տվել: Այդ տվյալները նույնպես լույս են սփռում XVIII դարի առաջին տասնամյակներին Ռուսաստանի տնտեսական կյանքում հայերի կատարած դերի վրա:

Նկատի ունենալով հաշվեմատյանի վերոհիշյալ արժանիքները, կարծում ենք, որ այն, որպես հայ-ռուսական տնտեսական կապերի բացահայտմանը նպաստող հարուստ մի սկզբնաղբյուր, արժանի է հրատարակության և ամբողջական ուսումնասիրության:

ТОРГОВЫЙ ДНЕВНИК САРАТА, СЫНА ШАХВЕЛИ,
КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ
ЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ

Ш. Л. ХАЧИКЯН

(Резюме)

Для изучения армяно-русских экономических связей немалое значение имеют торговые дневники армянских купцов, содержащие ценные сведения о товарах, вывозимых из Ирана и Закавказья в Россию и далее в Западную Европу и ввозимых из Западной Европы по тому же пути в Закавказье и Иран. Среди них важное место занимает торговый дневник Сарата, сына Шахвели (или Сарата Савельева, как записано его имя в русских таможенных книгах). В дошедшей до нас части дневника (Мате-

надаран им. Маштоца, рук. № 6241) сохранились записи 1712—1718 гг. о поездках Сарата из Исфахана в Тебриз, Шемаху, Астрахань, Москву, Архангельск, Амстердам и другие города, о купле и продаже различных товаров, об уплаченных пошлинах, полученной прибыли. Особое место среди товаров, экспортировавшихся им и другими джюльфинскими купцами через Россию в Голландию, занимал шелк-сырец. Специального изучения заслуживают данные дневника относительно вывезенных из России в Европу и ввезенных из европейских стран в Россию товаров и их цен, а также роль армянских купцов во внутренней торговле России.